## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1915թ. ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայ գաղթականությունը հայոց պետականության վերականգնումից հետո (1920թ. նոյեմբեր) բռնեց տունդարձի ճանապարհը:

Անկախություն ու պետականություն ձեռք բերած մեր ժողովուրդը, սակայն, ավերված ու քայքայված տնտեսությամբ երկրամասում ապրում էր դժոխային պայմաններում: Սովն ու համաճարակներն իրենց աներևակայելի ավերն էին գործում: Ժողովրդի նվիրյալ զավակների ջանքերով այդ ճակատագրական օրերին հիմնվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որի գերագույն նպատակն էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել սովի ու համաճարակի մատնված ազգաբնակչությանը և օժանդակել Հայաստանի Հանրապետության ավերված տնտեսության վերաշինությանը: Հայաստանի օգնության կոմիտեն իր առջև դրված խնդիրներով ոչ միայն արժանացավ համայն հայության ակտիվ աջակցությանն ու ջերմ համակրանքին, այլև Խորհրդային Հայաստանի կառավարության բարձր հովանավորությանը: Եվ 1921 թ. սեպտեմբերի 15-ի դեկրետով ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն: Կոմիտեն լուրջ աշխատանք է կատարել ոչ միայն հանրապետությունը ստեղծված աղետալի վիճակից դուրս բերելու, այլև աշխարհով մեկ սփռված հայ գաղթականների հայրենադարձությունը կազմակերպելու ուղղությամբ: Այդ առումով ևս հսկայական է կոմիտեի գործունեության համազգային նշանակությունը:

Ստորև հրապարակում ենք ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվում (ՀՀ ՆՊ ԿՊԱ) պահվող՝ Հայաստանի օգնության կոմիտեի մի քանի հիմնադիր փաստաթղթեր, 82 հիմնադիրների ցուցակը, ինչպես նաև հայ անվանի գործիչների անտիպ նյութերը, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել առ այսօր:

*ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Ա.*

Դ Ե Կ Ր Ե Տ

**Հայաստանի օգնության կոմիտեի մասին**

15 սեպտեմբերի, 1921 թ.
Երևան

Ի նկատի ունենալով մի շարք հասարակական գործիչների խնդիրը՝ հաստատել իրենց կազմած Հայաստանի օգնության կոմիտեն, որի նպատակն է՝ օգնության հասնել Հայաստանի սովյալ ազգաբնակության և իր գործունեության ընթացքում նաև օժանդակել երկրի շինարարության գործին՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշեց ներկայացված ստատուտը հաստատել և թույլատրել կոմիտեին սկսել իր

գործունեությունը հիշված նպատակի սահմաններում։

Ժողովրդական կոմիսարների
խորհրդի նախագահ՝ Ա. Մյասնիկյան
Քարտուղար՝ Մ. Ղարաբեկյան

---

ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, ց.1, գ.5, թ.7։

N 2

**Օգնության կոմիտեի կոչը համայն հայությանը**

16 սեպտեմբերի, 1921թ.
Երևան

***Աշխարհի ամեն կողմ ցրված հայոց ժողովուրդ***

Լսի՛ր։

Քեզ է կանչում Հայաստանի օգնության Կոմիտեն։

Քեզ է կանչում Հայաստանի մայրաքաղաքում գումարված ամեն հոսանքի հայ գործիչների և գրականագետների ժողովը։

Եվ գուցե երբեք դու չես լսել նրանց ձայները այսպես միացած և միահամուռ։

Եվ այսքան մեծախորհուրդ մի վայրկյանի։

Լսի՛ր։

Դարավոր մաքառումներից հետո համաշխարհային թոհ ու բոհից, լայնածավալ ալեկոծությունների և աղետների ծովից գերագույն ճիգերով բարձրանում է ազատ ու անկախ Հայաստանը։

Պատմական այս մեծ օրերին տենդային իրարանցումով նրա շուրջն են խռնված հայության կենսունակ տարրերը և Արարատի նվիրական հողի վրա մի իշխանություն տեղի է տալիս մյուսին։

Սակայն Հայաստանի օգնության կոմիտեն այսօր գալիս է հայտարարելու ի լուր համայն հայության, թե խաղաղությունն արդեն հաստատված է նաև մեր հայրենիքում և հաշտ ու համերաշխ հարաբերության մեջ է իր հին հարևան ժողովուրդների հետ։

Եվ արդեն անցնում է նա իր վերքերը դարմանելու և կազդուրելու աշխատանքին։

Կառավարությունն ոտքի է հանել իր բոլոր ուժերը ժողովուրդն ազատելու տիրող և մանավանդ առաջիկայում սպասվող սովից և վերաշինելու քանդված երկիրը։

Խաղաղություն գտնելով՝ գործի է անցել և ինքը, մեծ տառապյալը, Հայաստանի իսկական տերը, հայ գյուղացին։

Սովը, սուրն ու ավերածությունը չէին ընկճել նրա հանրահռչակ տոկունությունն ու շինարար ոգին։

Նա բազմաթիվ զոհեր է տվել և տալիս և տակավին, բայց չի լքում պապենական օջախը, և իր գութանի մաճին ապաստանած, կանգնած է հայրենի դաշտի վրա և կանգուն էլ պիտի մնա, ինչքան իշխանություններ էլ գան ու գնան։

Եվ, երբ հարևան աշխատավոր ժողովուրդները երեկվան արյունահեղության փոխարեն այսօր եղբայրական օգնության ձեռք են մեկնում հայ աշխատավոր ժողովրդին, երբ ավելի մեծ թափով է շարունակում ամերիկական ժողովուրդն իր

օգնությունը, մի՞թե կարող է պատահել, որ նրա տառապանքների և շինարար ճիգերի հանդեպ անտարբեր մնաս դու, նրա տարագիր եղբայրը, պանդուխտ հայություն. դու, որ հեռու ես հայրենիքից, բայց ուշք ու միտքդ միշտ դեպի ետ, դեպի հայրենիքը։

Անկարելի է։

Այո՛, Հայաստանի օգնության կոմիտեն քաջ գիտե, որ դու էլ ես բաժանված զանազան կուսակցությունների, ինչպես քաղաքական ու քաղաքացիական կյանքով ապրող ամեն մի ժողովուրդ։

Ահա Կոմիտեն ինքն էլ կազմված է տարբեր քաղաքական հայացքների մարդկանցից։

Բայց նա լավ գիտե և այն, որ հայ ժողովրդին սովից ազատելը և քանդված Հայաստանը վերաշինելը վեր է ամեն կուսակցական տարաձայնություններից։

Եվ այսպես մտածելով՝ ամենքը եկել միացել են այս վսեմ գործի շուրջը, կազմել են ազատ ու անկուսակցական մի հասարակական մարմին և գործունեության են հրավիրում ամենքին, ամեն կողմից։

Այսպես է մտածում և ինքը Հայաստանի Խորհրդային հանրապետական կառավարությունը, որ ոչ միայն գործելու լիակատար արտոնություն է տալիս, այլև աջակցում է ամեն մեկին և ամեն մի մարմին, որը կցանկանա օգնել՝ անձամբ, գա, աչքով տեսնի և տնօրինի իր օգնությունը։

Արդ, լսիր հայություն, ուր էլ որ լինիս. Եվրոպայից մինչև Ամերիկա, Եգիպտոսից մինչև Հնդկաստան և ամենուրեք։

Լսիր քեզ կանչող հայրենիքի ձայնը և շտապիր օգնության ամեն բանով, ինչով կարող ես, որ ունենաս այն, ինչ որ երազել ես դարերով՝ ազատ ու շեն հայրենիք։

---

Նույն տեղում, թ.1։

N 3

**Հայաստանի օգնության կոմիտեի շրջաբերականը համայն հայությանը**

16 սեպտեմբերի, 1921 թ.
Երևան

Հայրենակիցնե՛ր

Համաշխարհային պատերազմի և նրան հարակից յոթնամյա հանրածանոթ ցնցումների հետևանքով ավեր դարձած մեր հայրենիքին և ծայր չքավորության հասած ժողովրդին այսօր սպառնում է մի նոր վտանգ։

Անվերջ պատերազմներից ազատագրված հայ գյուղացին հազիվ դիմել էր իր

խաղաղ ու շինարար աշխատանքին, երբ երաշտը երկրի տարբեր մասերում ոչնչացնում է տարվա բերքը, և ազգաբնակության վրա ծանրանում է սովի ուրվականը։

Էջմիածնի, Կարսի, Ալեքսանդրապոլի և մյուս վայրերի որոշ մասերը արդեն ենթակա են սովի վտանգին, որի դեմ անկարող են մաքառել ոչ միայն վնասված շրջաններն իրենց սեփական թույլ ուժերով, այլև ամբողջ երկիրը իր քայքայված տնտեսությամբ։

Ռուսաստանից, Պարսկաստանից և նույնիսկ Միջագետքից ծայր ստացած ներգաղթի հոսանքը կրկնակի սպառնալիք է դարձնում իրականությունը։ Աշխատունակ և բնական արհավիրքների դեմ համառորեն մաքառող հայ գյուղացին իր այս տագնապալի օրերին զուրկ է ոչ միայն գյուղատնտեսական գործիքներից և անասուններից, այլև անհրաժեշտ սերմացուից։

Սովի ծավալումը կդառնա անխուսափելի, իսկ հետևանքները ճակատագրական, եթե այժմեն իսկ և անմիջապես չկազմակերպվի կառավարության և հասարակական ուժերի համագործակցությունն ու կուռ պայքարը ժողովրդական աղետի դեմ։

Համաժողովրդական գերագույն շահերի այս գիտակցությամբ հասարակական գործիչների մի խումբ նախաձեռնություն է վերցրել կազմելու Երևանում «Հայաստանի օգնության կոմիտե», որի կանոնադրությունը հաստատել է սույն սեպտեմբերի 15-ին Խորհրդային Հայաստանի կառավարությունը։

Համաձայն իր կանոնադրության, Կոմիտեն նպատակ ունի կազմակերպելու ազգաբնակության համար անմիջական օգնություն սովի դեմ և զուգընթացաբար նպաստել երկրի տնտեսական շինարարության գործին։

Հավատարիմ իր հասարակական բնույթին և հետապնդելով այնպիսի մի գերազանցորեն անվիճելի գերագույն նպատակ, ինչպիսին է ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովումը և երկրի տնտեսական վերաշինությունը, Կոմիտեն իր գործունեության ընթացքում պահպանելու է չեզոքություն քաղաքական կամ կուսակցական որևէ պայքարի հանդեպ։

Գործելով իր կանոնադրության սահմաններում, իբրև ինքնօրեն մի հասարակական մարմին, Կոմիտեն ոչ միայն գործակցում է կառավարությանը նրա՝ սովի դեմ մղվող պայքարին և երկրի տնտեսական վերաշինության գործին, ինչպես նաև երկրում և արտասահմանում համանման նպատակներ ունեցող մարմիններին, այլև ինքն անմիջապես վարում է օգնության գործը, կազմակերպելով ժողովրդի տնտեսության անհրաժեշտ իրերի և դրամների գանձումը և նրանց բաշխումը՝ ըստ իր հայեցողության։

Հատուկ գումարների և իրերի վերաբերմամբ նա լիազորություն և պարտականություն ունի գործադրելու նրանց իր նպատակների սահմաններում՝ համաձայն նվիրատուների ցանկության և նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ։

Վստահությամբ ընդառաջելով հասարակական ուժերին, կառավարությունը բավականանում է միայն երկրի բարձր իշխանության՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի օրինական հսկողությամբ, տրամադրում է նրան ազատորեն օգտվելու իր նպատակների համար պետական բոլոր տեխնիկական հարմարություններից։

Կոմիտեի նախագահությունը հաշվետու է ընդհանուր ժողովին և նրա միջոցով հասարակությանը, որին ներկայացվելու են երկրի տնտեսական վիճակի վերաբերյալ փոստային տվյալները և նրա գործունեության տպագիր հաշիվները։

Ներկայացնելով ձեզ երկրի ու ժողովրդի տագնապալի վիճակն ու դիմելով ձեր շուտափույթ ու ակտիվ աջակցությանը մեր ձեռնարկած հասարակական աշխատանքին, մենք չենք ծածկում ձեզանից սպառնացող աղետի չափն ու մեր պատասխանատվության ծանրությունը։

Պարտքի կրկնակի գիտակցությամբ մենք դիմում ենք հասարակական օգնության և շինարարության գործին մեր հայրենիքում, որտեղ ծառացած է ամբողջ ժողովրդի ֆիզիկական պարզ և կտրուկ խնդիրը։

Մենք հավատում ենք, որ մեր հայրենակիցների և մասնավորապես արտա-սահմանյան հայ գաղութների միահամուռ և անվերապահ աջակցությամբ պիտի կարողանանք ոչ միայն մաքառել սովի դեմ, այլև նպաստել երկրի արդյունաբերական ուժերի զարգացմանը, որոնք վերջապես հանելու են մեզ մուրացիկի և գաղթականի վիճակից և հնարավորություն են տալու հայ գյուղացուն ցուցադրելու իր ստեղծագործական կորովը։

Մեր ձեռնարկի համաժողովրդական բնույթի գիտակցությամբ և միահամուռ աջակցության հավատով կոչ ենք անում ձեզ, հայրենակիցնե՛ր.

Շուտափույթ հասցրեք «Հայաստանի օգնության կոմիտեին»առաջին հերթին հաց, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, զգեստ, դեղորայք և դրամ՝ ապահովելու բնակչությանը սովամահության վտանգից, ընդունելու և տեղավորելու երեք տարի աստանդական կյանք վարած այն գաղթականներին, որոնք հոգնած և ընչազուրկ՝ դառնում են իրենց հայրենիքը։

Մթերքների հետ ուղարկեցեք և ձեր տնտեսական ու տեխնիկական կենդանի ուժերն ու ձեռնարկները, որոնք կկարողանան կյանքի կոչել բնական հարստություններով այնքան առատ մեր երկիրը և տնտեսապես կազդուրել բացառիկ ջանասիրությամբ օժտված մեր գյուղացիությանը։

Երկիրն ու ժողովուրդը սպասում են մեր կենդանի և ակտիվ գործակցությանը։

Մենք կկատարենք, մենք պիտի կատարենք մեր ընդհանուր պարտքը։

---

Նույն տեղում։

N 4

**ՀՕՄ-ի և ՀՕԿ-ի համատեղ կոչը համայն հայությանը**

01 դեկտեմբերի, 1921 թ.
Կոստանդնուպոլիս

Մեծահա՛րգ հայրենակիցներ,

ՀՕՄ-ը, հիմնված 24 հոկտեմբերի 1920 Կ. Պոլիս, կազմված է քաղաքական չորս կուսակցությունների, մամուլի և 43 միությունների ներկայացուցիչներեն, նպատակ ընտրած է իր նյութական և բարոյական աջակցությունը ընծայել Մայր Հայրենիքին։

ՀՕԿ-ը հիմնված է Հայաստանի մեջ, որուն կանդամակցեն երկրի և Կովկասի հայ բոլոր հոսանքներու ղեկավարները, առաջադրած է կռվիլ սովին դեմ և օգնել Հայաստանի վերաշինության։

Այսպես, ուրեմն, ՀՕՄ-ը և ՀՕԿ-ը իրենց հետ ունենալով արևելահայ և արևմտահայ մտավորական ու հասարակական ուժերու ամբողջությունը, նույն սրբազան հառաջադրությունը ունին, պահպանել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և նպաստել Հայաստանի վերաշինության աշխատանքին։ Մենք համոզված ենք, որ ծրագիրը զոր գծած են արևմտահայերը Պոլսո մեջ և արևելահայերը՝ Հայաստանի մեջ, պիտի դառնա օրակարգը բոլոր հայերուն, ուր որ ալ գտնված ըլլան անոնք։ Ինչքան ալ գաղափարական ըլլա պայքարը, զոր զանազան կուսակցություններ,

նույնիսկ հանուն Հայաստանի բարօրության, հանուն հայ ժողովրդի երջանկության, այնքան մոլեգնորեն կմղեն իրարու դեմ, պետք է դադրի այդ պայքարը հոն, ուր մեծ օրակարգը կսկսի՝ Հայաստան և հայ ժողովուրդ։ Մենք հոս և Հայաստանի մեջ հաստատած ենք ներդաշնակ համագործացության կարելիությունը, կարգը արտասահմանինն է։

Հայրենակիցնե՛ր

ՀՕՄ-ի և ՀՕԿ-ի անունով կոչ կուղղենք ձեզի՝ որպեսզի փութաք ՀՕՄ-եր կազմել։ Մեր կոչը պարտականության հրավերեն ավելի բանաձևված աշխատանքի հորդորագրությունն է, որովհետև մեզի ծանոթ է այն մաքուր տրամադրությունը, որ կա արտասահմանի մեջ հայ ժողովրդին և հայ հայրենիքին նկատմամբ։

Հայրենակիցնե՛ր

Ամեն քաղաք պետք է իր անկախ ՀՕՄ-ը ունենա, այս կերպով ստեղծելու համար ազգային պաշտպանության հզոր կազմակերպություն մը, որուն նշանաբանները, հավատացած ենք թե պարտադիր պիտի ըլլան բոլոր Հայերուն համար։

Այս կերպով ՀՕՄ-ը մեծ ընտանիք մը պիտի ըլլա, որուն որևէ մեկ անդամ, ինչ քաղաք ալ փոխադրված ըլլա ան, պիտի ունենա այն բոլոր իրավունքները զոր ունին այդ քաղաքի ՀՕՄ-ի անդամները։

Ձեզ կը ղրկենք ՀՕԿ-ի ստատուտը և ՀՕՄ-ի ծրագիրը, որպեսզի ձեր տեղական պայմաններուն հարմարեցնելով, կազմեք ձեր սեփական մարմինները։

Խորին հարգանքներով

| Դիվան | Դիվան |
|---|---|
| ՀՕՄ-ի կեդր. վարչություն | ՀՕԿ-ի նախագահություն |
| Ատենադպիր Ատենապետ | Անդամ. քարտուղար նախագահ |
| Հովի. Թալըքյան Տոքթ. Ծ. Ալթունյան | Ե. Թաղիանոսյան Հովի. Թումանյան |
| | *ստորագրություն ստորագրություն* |

Նույն տեղում, գ. 2, թ.1։

N 5

**Հայաստանի օգնության կոմիտեի կոչ-հրավերը**

05 մայիսի, 1922 թ.
Երևան

Հարգելի՛ հայրենակիցներ

Մեր Մայր Հայրենիքի պահպանության և վերաշինության գործը պիտի լինի համայն հայության գործը։

Հիշենք միշտ, որ ի սփյուռս աշխարհի ցրված հայ ժողովուրդը այն ժամանակ միայն պատվավոր տեղ կբռնի մյուս ազգերի շարքում, երբ կունենա ապահով ու բարեկեցիկ հայրենիք։

Իսկ տնտեսապես ապահով ու բարեկեցիկ հայրենիք կունենանք այն ժամանակ միայն, երբ բոլոր հայերը, ինչ երկնակամարի տակ էլ որ ապրելիս լինեն, միահամուռ կձգտեն այդ նպատակին։

Խմբվենք բոլորս մեր Մայր Հայրենիքի շուրջը, միացնենք մեր բոլորիս ջանքերը պահպանելու և վերաշինելու մեր երկիրը։ Դա է միակ միջոցը, որ կազատի հայության խոշոր մասը թափառաշրջիկի և մուրացիկի վիճակից և օտարների գթասրտության առարկան լինելու անպատվաբեր դրությունից։

Այսօրվա սովի ու համատարած դժվարության դեմ մաքառելու համար և միաժամանակ մեր կիսավեր հայրենիքը վերաշինելու և վերականգնելու նպատակով, Հայաստանի օգնության կոմիտեն վճռել է հրավիրել համագումար Հայաստանին օգնող բոլոր հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Համագումարին կարող են մասնակցել այն բոլոր հաստատություններն ու հիմնարկությունները, որոնք Հայաստանի օգնության և վերաշինության գործը համարում են իրենց գլխավոր նպատակը։

Հայաստանի օգնության կոմիտեն կոչ է անում այն բոլոր հիմնարկություններին ու հաստատություններին, որոնք հետաքրքրվում են Հայաստանի ներկա վիճակով և նրա ապագա բարգավաճման խնդրով։ Թող գան նրանց պատգամավորները Հայաստան՝ մասնակցելու մեր անդրանիկ համագումարին և այնուհետև մշտական ու սերտ կապ հաստատելու Մայր երկրի և հայկական հատվածների մեջ։

Համագումարը կկայանա Երևանում, ներկա 1922 թ. հունիսի 25ին։

Նախագահ Ա. Երզնկյան

Նախագահության անդամ քարտուղար Եր. Թաղիանոսյան

---

Նույն տեղում, *թ. 10.*

N 6

**Հայաստանի օգնության կոմիտեի ստատուտը**

15 սեպտեմբերի, 1921 թ.
Երևան

***Ա. Նպատակն ու անելիքները***

1. ՀՕԿ-ի անմիջական նպատակն է օգնության հասնել Հայաստանի սովյալ ազգաբնակությանը և այդ գործունեության ընթացքում նաև օժանդակել երկրի ընդհանուր շինարարության գործին։

2. Հոդված 1-ում առաջադրվող նպատակներին հասնելու համար կոմիտեն.

ա/ Գանձում ու հավաքում է դրամական՝ թե իրերով և հատկապես մթերքներով նվիրատվություններ՝ ինչպես Հայաստանում, նույնպես և արտասահմանում, առանձնապես արտասահմանյան հայ գաղութներում։

բ/ Փոխադրում և բաշխում է այս ամենը՝ թե կառավարական և թե իր մարմինների միջոցով։

գ/ Գրավոր թե բանավոր պրոպագանդ է մղում (հրատարակություններով, հրապարակային ժողովներում և այլն), այլև հատուկ նվիրակներ՝ պատգամավորներ ուղարկելով արտասահման և հարաբերություն պահպանելով արտասահմանի համապատասխան այն օրգանների հետ, որոնք կարող են այդ նպատակի համար օգտակար լինել։

2. Ընդհանրապես ձեռք է առնում այն բոլոր օրինական միջոցները, որոնք անհրաժեշտ են համարվում ներկա ստատուտով նախատեսված նպատակներին հասնելու համար, առանձին ուշադրության առնելով հայ գաղութների աջակցությունը։

### *Բ. Միջոցները*

3. ՀՕԿ-ի միջոցներն են կազմում.

ա/ Ընդհանրապես նվիրատվություններ և մասնավորապես հայ գաղութներից ստանալիք դրամական՝ թե իրերով և թե մթերքներով օգնությունը։

բ/ Հրատարակություններից, հավաքույթներից և այլ ստացած մասնակի մուտքերը։

### *Գ. Կազմակերպությունը*

4. ՀՕԿ-ի կազմն է՝

ա/ ընդհանուր ժողով,

բ/ նախագահություն,

գ/ վերաստուգիչ հանձնաժողով։

5. Նախագահությունը հանդիսանում է Կոմիտեի բարձրագույն գործադիր մարմին, որ գործում է ներկա ստատուտի շրջանակներում և ընդհանուր ժողովի որոշումների և հրահանգների համաձայն։

### *Դ. Իրավական դրությունը*

6. ՀՕԿ-ը իր նպատակներով և թե իր կազմակերպման սիստեմով՝ անկախ իր անդամների քաղաքական դավանանքից և կուսակցական հանգամանքից, հասարակական մի մարմին է, իբրև այդպիսին, նա իրեն հայտարարում է չեզոք՝ քաղաքական և կուսակցական պայքարի հանդեպ։

7. ՀՕԿ-ը ենթակա է բացառապես Ժողկոմների խորհրդի հսկողության և ազատ է առանձին Ժողկոմների, ինչպես նաև տեղական իշխանությունների իրավասությունից։

8. Կոմիտեի անդամները իրենց գործունեության միջոցին և այդ գործունեության առթիվ կատարած հանցանքների համար պատասխանատու են անհատականորեն և ոչ թե հավաքականորեն և միաժամանակ ընդդատյալ են միմիայն ժողովրդական դատաստանին։

9. ՀՕԿ-ը իրավաբանական անձ է և ունի իր իրավաբանական կնիքը։

10. Կապի հասցեով ուղղված դրամները, իրերը և ընդհանրապես ամբողջ գույքը ազատ են պետականացումից, բռնագրավումից և այլ սահմանափակիչ օրենքներից, և միաժամանակ, ներքին թե արտաքին փոխադրությունների ընթացքում օգտվում են պետական և գույքային վերապահյալ արտոնություններից։

11. Կոմիտեն իր տրամադրության ենթակա դրամները, ընդհանրապես գույքը գործադրում է սույն ստատուտով նախատեսված նպատակների սահմաններում, ըստ իր հայեցողության, իսկ իր նպատակներին համապատասխան հատուկ նվերները գործադրում է համաձայն նվիրատուի կամքի։

12. Կոմիտեն իրավազոր է գրավոր թե բանավոր զեկուցումներ ներկայացնել, դիմումներ անել Ժողկոմների խորհրդի նախագահին և առանձին Ժողկոմներին յուր գործունեության հետ կապված և նրանից բխող հարցերի մասին, ստանալով նրանցից, ինչպես և ընդհանրապես խորհրդային իշխանության կենտրոնական, թե պետական մարմինների կողմից լայն աջակցություն։

13. Կոմիտեի կենտրոնն է Երևանը։

Հայաստանի օգնության կոմիտե

Նույն տեղում, գ. 5, թ. 1։

N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

15 սեպտեմբերի, 1921 թ.

1. Աբելեան Պօղոս
2. Աբովեան Սարգիս
3. Անտէլէպեան Սարգիս
4. Աբեղեան Մանուկ
5. Արծրունի Վահան
6. Առաքելեան Սուրեն
7. Աւդալբէգեան Թադէոս
8. Աֆրիկեան Խաչատուր
9. Բէկզադեան Ալէքսանդր
10. Բաբեան Արշակ
11. Գրիգորեան Գաբրիէլ
12. Գէորգեան Մամիկոն
13. Դաշտոյեան Ռ.
42. Մանուելեան Միքայէլ
43. Մայսուրեան Օլգա
44. Մելիքեան Ռոմանոս
45. Մարտիկեան Սերգո
46. Մելիքեան Յովհաննէս
47. Մալխասեան Ստեփան
48. Մելիք-Ղարագէօզեան Գէորգ
49. Մելիքեան Արշաւիր
50. Մանանդեան Յակոբ
51. Մշեցի Քեռի Յովո
52. Յովհաննիսեան Տիգրան
53. Յովհաննէս
54. Շիղա

14. Դեմիրչեան Դերենիկ
15. Երզնկեան Արամայիս
16. Երզնկեան Սուրէն
17. Եւանգուլեան Գրիգոր
18. Երզնկեան Եզեկիէլ
19. Զաւրեան Դաւիթ
20. Թարխանեան Նիկողայոս
21. Թադէոսեան Եղիշէ
22. Թաղիանոսեան Երուանդ
23. Թումանեան Մարիամ
24. Թումանեան Լեւոն
25. Թումանեան Յովհաննէս
26. Թորոսեան Պետրոս
27. Իսախանեան Տիգրան
28. Լէո
29. Լազո
30. Լազարեան բժիշկ
31. Խաչատրեան Յակոբ
32. Խանզադեան Ցոլակ
33. Խանոյեան Սարգիս
34. Կարինեան Արտաշէս
35. Կախոյեան Ասատուր
36. Կարապետեան Յովհաննէս
37. Կասեան Սարգիս
38. Կանայեան Ստեփան
39. Կիլպէնկեան Սերովբէ
40. Համբարձումեան Սաքո
41. Մակինցեան Պօղոս
55. Յարութիւնեան Սամսոն
56. Նար-Դոս
57. Նազարբէգ Մարօ
58. Նաւասարդեան Բագրատ
59. Շահվերդեան Ալեքսանդր
60. Շահվերդեան Դանիէլ
61. Չուբարեան Գրիգոր
62. Պիճիկեան Գագիկ
63. Պապովեան Ալէքսանդր
64. Պալեան Երվանդ
65. Սպենդիարեան Յովհաննէս
66. Սարեան Մարտիրոս
67. Սարգսեան Լեւոն
68. Սուրխաթեան Յարութիւն
69. Վարդանեան Գրիգոր
70. Սարգիս
71. Տէր-Վարդանեան Ալէքսանդր
72. Տէր-Գրիգորեան Սահակ
73. Տէր-Ռուբինեան Գաբրիէլ
74. Տէր-Ղազարեան Նարիման
75. Տէր-Օհանեան Գագիկ
76. Տէրտէրեան Արսէն
77. Տէր-Առաքելեան Անուշաւան
78. Տիգրանեան Սիրական
79. Փիրումեան Սիմոն
80. Քալանթար Լեւոն
81. Քալանթարեան Պապակ
82. Օրբելեան Յովհաննէս

---

Նույն տեղում:

N 8

**Հովհաննես Թումանյան, Հայաստանի օգնության կոմիտեների առիթով**

«... Եվ ահա մեծ պատերազմի ու նրա հետ կապված աղետների հետևանքով հայ աշխատավոր ժողովուրդը, հայ գյուղացին ընկել է ծանր կացության մեջ:

Իր բերանի հացից սկսած՝ նա շատ բան է կորցրել էս մի քանի տարվա ընթացքում: Շատ բան է կորցրել, բայց ձեռք է բերել մեր դարերով երազած ազատությունը: Եվ որովհետև ունի ազատություն և իր շինարար բազուկը, շուտով կունենա ամեն բան: Սակայն նրա էս ծանր օրերին օգնության գալու և նրա շինարար աշխատանքին մասնակից լինելու պարտավոր է ամեն մի հայ՝ մոտիկից սկսած մինչև հեռավոր գաղութները: Էս օգնությունը երեկվա բարեգործությունը չէ ...

Էստեղ ամեն մի հայի պետք է առաջնորդի ոչ թե խղճահարությունը, այլ քաղաքացիական պարտքի խոր գիտակցությունը։

Ամեն մի հայ պետք է զգա, որ ինքը Ազատ Հայաստանի քաղաքացի է և գալիս է գործակցելու իր երկրի կառավարությանը։

Ահա այդ գործակցության համար է, որ Հայաստանի մայրաքաղաքում կազմակերպվեց Հայաստանի օգնության կոմիտեն, անկուսակցական հասարակական մի մարմին։

Եվ դարերից ի վեր առաջին անգամն է մեր կյանքում, որ էս տեսակ մի մարմին հաստատվում է իր սեփական պետության դեկրետով և իրավունք ունի ազատ շարժվելու իր երկրում, ինչպես իրավունք ունի ամեն մի հայ, որ գալու է իր ժողովրդին ու իր երկրին օգնության։

Լրաբեր 2-13 Նշանակալից երևույթ է, որ իրարից անկախ ու անտեղյակ՝ նման մարմիններ են առաջ գալիս և մեր գաղութներում։ Էս նշանակում է, թե կենդանի է հայությունը։

Կենդանի է և ուժեղ։ Երևանից սկսած մինչև հեռավոր գաղութները շարժվում է նա՝ դեպի հայրենիք։

Ինչքան էլ խոչ ու խութեր, ինչքան էլ դժվարություններ ու թշվառություններ հանդիպեն ճանապարհին, նա հասնելու է իր նպատակին։

Հայաստանի ազատ հողի վրա նա շինելու է իր ազատ ու առատ տունը, հայկական բարձրավանդակի վրա զարգացնելու է իր ազգային հանճարը և իր խոսքն ասելու է աշխարհին։

Նա կարող է, և իր կարողություններով նա իրավունք ունի։

Եվ Հայաստանի օգնության կոմիտեները, որ առաջ են գալու ամենուրեք, մեծ դեր ունեն կատարելու էս մեծ շինարարության մեջ»։

---

Նույն տեղում, գ. 5։

N 9

**Դերենիկ Դեմիրճյան, Գործ և ոչ խոսք**

Հայ ժողովրդի օգնության հարցը քմահաճույքի հարց չէ։ Կարիք չկա այդ հարցը փաստելու և համոզիչ դարձնելու։

Անշուշտ, այդ հարցի շուրջը կարող են խմբվել բազմաթիվ բարդ շահեր՝ ոմանց նյութական դիտավորությունը, ոմանց գաղափարը, ոմանց ճաշակը, մյուսների կարեկցությունը, անգամ սնափառությունը։ Բայց կրկնում եմ՝ հայ ժողովրդի օգնության հարցը պարզ ու մերկ մի բան է։

Բարդությունը առաջ է գալիս ոմանց, եթե թույլ տաք, վարդագույն կամ մոխրագույն ռոմանտիզմից, որի միջոցով նրանք նայում են հայ ժողովրդի գործերին։

Նրանք իրենց հայացքն ուղղում են դեպի Հայաստանի անցյալն ու ապագան, վերակոչում են անցյալի պատկերները, գուշակում են ապագայի ոսկեվառ գալիքը, պատկերացնում են վաղվա հայ ժողովուրդը, ոգևորվում, ապրում են դրանով և ... մոռանում են ներկան։

Մյուսներն իրենց աչքերը չափազանց մոտիկ տանելով ներկային, մանրակրկիտ խուզարկում են նրա աննշան կնճիռները, ամենաչնչին քերծվածքները, մոռանում են հայ ժողովրդի պատմությունն ու ապագան և ... չեն տեսնում ներկան։

Մինչդեռ հայ ժողովրդի ներկա կյանքը, ինչպես ամեն ժողովրդի կյանքը, իրական, հասարակ մի բան է և միանգամայն հեռու ռոմանտիզմից։

Ոչ վարդագույն, ոչ մոխրագույն։

Նա «իրագույն» է գերազանցապես։

Այո, հայ ժողովուրդը մի իրականություն է, ապրող մի մարմին, հավաքական էակ, որ ինքն էլ է մասնակցում իր կյանքին։ Ապա, ուրեմն, ինքն է պատասխանատու իր վիճակի համար։ Նա գիտակ է իր գործերին և լարված տնօրինում է իր բախտը։

Մի խոսքով, նա այնքան էլ խաղալիք չէ մեր ձեռքին, ինչպես կարծում ենք։ Նրան միշտ վարել, հրամայել, կույր գործիք դարձնել չի կարելի։ Գոնե ճակատագրական վճռական վայրկյաններին։

Զիջելով մեզ չնչին հարցերի մեջ՝ հայ ժողովուրդը իր գերագույն խնդիրները վճռում է ինքնագլուխ և խնդիրը վճռում է բնազդով ու տարերային ուժով։

Թվում է, թե նա գնում է մեր ետևից։

Մենք ենք, որ գնում ենք նրա ետևից։

Վերջին յոթնամյա պատերազմում հայ ժողովուրդը ինքը վճռեց իր բախտը։

Այս րոպեիս էլ շարունակում է ինքը վճռել։ Գուցե սա այսօր հասկանալի չի մեզ, վաղը կհասկանանք։

Թողնենք մի կողմ նրա քաղաքական կյանքը։

Նայենք նրա կյանքի մյուս ծալքերը։

Այս րոպեիս հայ ժողովուրդը զբաղված է իր ավեր տունը վերաշինելով։ Յոթնամյա պատերազմը, գաղթն ու փախերը, քաղաքացիական կռիվները մեծապես հարվածել են նրա տնտեսությանը։

Անցեք Հայաստանը ծայրեծայր, և դուք կտեսնեք մի տենդային անդուլ աշխատանք վերաշինության։

Այո, միաժամանակ և տնքոցներ՝ սովի, հիվանդության։

Ուրիշ ինչպե՞ս պիտի լիներ։

Մինչդեռ մենք՝ մտավորականներս, Հայաստանով զբաղվում ենք միայն մեր տեսական վիճաբանությունների մեջ՝ Հայաստանում ամեն րոպե տեղի ունի իրականությունը, պարզ հասարակ իրականությունը։

Հայ ժողովրդի կյանքը այսօր ևս, ինչպես միշտ, առօրյա, տնական, մտահոգ աշխատավոր կյանք է։ Մինչդեռ մենք սպասում ենք ինչ-որ հանդեսների, որ նայենք այն կողմը։

Կամենու՞մ ենք օգնության հասնել հայ ժողովրդին իր հասարակ, բայց իսկապես վսեմ գործի մեջ, ուզու՞մ ենք, որ նա ապրի և վերաշինի իր տունը՝ պարզապես շտապենք օգնության և ...

Ընդհատենք ճառերը։

---

Նույն տեղում։

N 10

**Լեռ, Համաժողովրդական ուժերով**

«Հայաստանի օգնության կոմիտեն» մի վերին աստիճանի նշանակալից և խոշոր փաստ է Հայաստանի Հանրապետության այժմեության մեջ։ Փաստի մեծ կարևորությունը բխում է ամենից առաջ այն հանգամանքից, որ նա ներկայացնում է իբրև առաջին քայլ ժողովրդական ցրիվ ուժերը մի ընդհանուր պետական գաղափարի շուրջը համակենտրոնացնելու։

Արդյոք հայ ժողովրդին վիճակվա՞ծ է կառուցանել իր սեփական անկախ և ազատ պետությունը, որ կարողանա ինքնուրույն, իր սեփական ուժերով գոյություն պահպանել Ասիայի իրականության մեջ։

Այս խոշոր հարցը կարելի է ձևակերպել ավելի համառոտ և համեստ հարցի մեջ, ընդունա՞կ է հայ ժողովուրդն առհասարակ պետական շինարարության։

Նայում ենք նրա երկար պատմական անցյալին և տեսնում ենք, որ հազարավոր տարիների ընթացքում նա անշեղ ու անհողդողդ եղել է մի շինարարապաշտ, կարելի է ասել՝ շինարարամոլ ժողովուրդ։ Քաղաքական խոշորության, աշխարհակալական խոյանքների տեսիլքները չեն զբաղեցրել նրան, այլ սեփական մի անկյուն ունենալու, մի խաղաղ հայրենիք գտնելու և այնտեղ աշխատելու, անդադար աշխատելու, նույնիսկ ամենադաժան պայմանների մեջ ստեղծագործելու տենչերը։

Այսօրվա Հայաստանը այդ անցյալի մի հարազատ պատկերն է ներկայացնում։ Երկիրը նոր-նոր է դուրս գալիս ահեղ ցնցումների իրականությունից, երկրի վրա ծագել է խաղաղության կենսատու արշալույսը և հայ ժողովուրդն իր ուժերի խտացրած ու միալար թափով՝ հավատարիմ իր պատմական բնազդին, աշխատանքի վրա է, հերկում է, մշակում է իր դաշտը, քրտինքով ոռոգում է իր գծած խոր ակոսները և նրանց մեջ ծրագրել է իր ավերակները վերաշինելու, իր անասելի մերկությունը սքողելու սուրբ հույսերը։

Ոտքի վրա է դարավոր հերոս «աշխատավորը», որ աշխարհ է զարմացրել իր տանջանքներով և իր ստեղծագործական հուժկու ոգով։

Այսօր էլ, ինչպես միշտ, նա պատրաստ է երկինք բարձրացնել իր մարդկային կոչումը։ Բայց այսօր էլ, ինչպես միշտ, իր պատմության ընթացքում նա շրջապատված է ահավոր ու անագորույն թշնամիներով, որոնք սպանում են նրա եռանդը, թուլացնում են նրա ջլուտ ու խորշոմած թևերը։

Ամենամեծ, ահռելի անխնա թշնամին աղքատությունն է, որ հազար գլխանի վիշապի պես ծծում է ժողովրդի արյունն ու կենսական նյութերը՝ բերելով այսօր սով, վաղը՝ կիսասով և գրեթե ամեն օր քաղց ու պակասություն։

Մարտնչել այդ ահռելի թշնամու դեմ չէ կարող Հայաստանի հողի վրա ապրող ժողովուրդը, որովհետև մարդկային բնության անհասանելի մի մեծագործություն է մերկ թևերով կռվել կյանք ծվատող ճիրանների ու մագիլների դեմ։

Հայ ժողովուրդը մերկ ու անօգնական է այն հերոսամարտի մեջ, որ վիճակվել է նրան իր դաժան ու տառապալից միջավայրում։ Նրան խեղդող աղքատությունը հազար ու բյուր զենքեր է շողացնում նրա գլխին, իսկ նա այդ բոլորի մեջ մերկ է և վատուժ։

Պահել նրան այս դրության մեջ՝ նշանակում է դանդաղ և աստիճանական բնաջնջման դատապարտել նրան։

Եվ հրամայողական պահանջ է ծագում՝ դարձնել այդ մերկ ու անօգնական ժողովուրդը պետական գաղափարի կենտրոն և շրջապատել այդ կենտրոնը Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայության իրական և եռանդուն գործակցությամբ, ուրիշ խոսքով՝ հիմնավորել և ամրակուռ կազմակերպել համաժողովրդական ուժերի աշխատանքը հայ պետականության բարձր գաղափարը կենդանի և իրական պահելու համար։

Ահա ինչ է ասում «Հայաստանի օգնության կոմիտեի» կազմակերպությունը։ Ես չգիտեմ, թե ինչ կանի այդ կոմիտեն, բայց խորապես համոզված եմ, որ նրա ներկայացրած համաժողովրդական ուժերի գործակցության սկզբունքից դուրս՝ չկա և ոչ մի փրկություն, չի կարող լինել ոչ մի փրկություն։

Քաղաքական տարբեր հոսանքների, դավանությունների և աշխարհայացքների այն ահեղ բախումների մեջ, որոնցով խճճված են մեր օրերը, չպետք է մոռանալ այն տարրական ճշմարտությունը, որ բոլոր շարժումների հիմքն ու պատվանդանը ժողովուրդն է կազմում։ Առանց առողջ ու կուշտ ժողովրդի չի կարող լինել քաղաքական կյանք։ Ուստի բոլոր մրցողների, բոլոր պայքարողների համար հավասարապես կարևոր և առաջնակարգ պահանջ պիտի լինի միանալ իրար, գործակից լինել այնտեղ, ուր ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու հարց կա։ Այս ահավոր և սոսկալի հարցի առջև պիտի դադար առնե մի անհամաձայնություն և կյանքի ու մահվան հարց պիտի դառնա համաժողովրդական ուժերով գործելու անհրաժեշտությունը։

Ամենքս՝ մեծ, թե փոքր, ուժեղ, թե թույլ, պատկառանքով գլուխ իջեցնենք մեր մեծ նահատակի, մեզ ծնող ու կերակրող ժողովրդի առաջ և նրան տանք այն ամենը, ինչին կարոտ է իր անգնահատելի կյանքը պահպանելու համար։

Հայաստանի այժմյան խորհրդային կառավարությունն ամեն միջոց տալիս է, ամեն աջակցություն և հնարավորություն տրամադրում է, որ մենք ամենքս Կալիֆորնիայից մինչև Հնդկաստան միացնենք մեր կամքն ու պարտականությունը մեր բնիկ հայաստանցի ժողովուրդը սովից, աղքատությունից, տգիտությունից ազատելու համար, որով միայն հնարավորություն կտանք նրան իր սեփական ջանքերով ամուր ու անսասան հաստատվել իր հողի վրա և կերտել հազարավոր անցած սերունդների երազած հայ անկախ և երջանիկ պետություն։

Արհամարհել բոպեի պահանջը, մերժել Հայաստանի կառավարության այսօրվա ժողովրդական շինարարական ծրագիրը՝ կլինի ոճիր ոչ միայն հայության, այլև մարդկության դեմ։

---

Նույն տեղում։

N 11

**PRO ARMENIA, Հայաստանի համար**

Համաշխարհային, Անդրկովկասյան ու ներքին քաղաքացիական պատերազմներից հետո բավականաչափ ընդարձակ ազգագրական Հայաստանն այժմ վերածվել է մի փոքրիկ քաղաքական մարմնի՝ հասարակության, որ շատ ավելի համեստ տարածություն ունի, քան ժողովրդի ազգագրական սահմաններն էին պատերազմից առաջ: Մեծագույն, միացյալ ու ծովից ծով երազական Հայաստանի փոխարեն այժմ ունենք մի Հայաստան, որը հավակնություն չի հայտնում նայելու 1914 թվի սահմաններից այն կողմ, այլ որը նույնիսկ Արարատյան դաշտում զրկված է մայր գետի՝ Արաքսի երկու ափերն ընդգրկելու իրավունքից: (Դեպքերի հետագա բացասական զարգացումը) ... երկիրն ու ժողովրդին հասցրին
մի խղճալի վիճակի, երբ հանրապետությունից դուրս մնացած հարավային ու արևմտյան վայրերում, 1914 թվի սահմաններից այն կողմ ու այս կողմ հայ ազգաբնակության հետքերն անգամ չեն երևում այլևս, իսկ երկրի խորքում մնացել է մի փոքրիկ զանգված, որ զենքի երկարատև շաչյունից հետո աչք չի բաց անում սովի միալար նվոցներից ու համաճարակի անլուր հառաչանքներից:

Մեծ նավաբեկությունից ազատված այս թշվառ բեկորների համար է, որ այժմ կրկին բարձրանում է հավատի ձայնը: Ծանր է, սոսկալի է դրությունը բուն երկրում: «PRO ARMENIA», «Հայաստանի համար», հնչում է նորից վաղածանոթ աղաչանքն արտասահմանում ու գաղութներում: Ողողանջում ու գուժում է ահազանգը՝ հիշեցնելով վտարանդիներին ու գաղթականներին, որոնք վտանգներից հեռու են եղել և նյութապես համեմատաբար բարեկեցիկ, երկրի բնիկ կամ փախստական ժողովրդի մասին, որ կիսովին կամ լիովին մուրացիկ, քարշ է տալիս իր կյանքն օրեցօր՝ առանց գութանի ու սերմացուի, առանց լծի և լծկանի, առանց կթանի ու թացանի, մերկ, անապաստան, միշտ սառը թոնիրը, ամայի գոմն ու դատարկ մառանն աչքի առաջ:

«PRO ARMENIA», «Հայաստանի համար» արձագանքում է մարդ ընդոստ, բայց և իսկույն սթափվում ցնցվելով: Որքան դառն հիշողություններ են կապված այս երկու բառերի հետ: Որքան հաճախ են արտասանվել այս բառերը մեր կյանքում: Որքան նյութական ու մարդկային զոհաբերություններ դուրս կորզել և որքան ցնորամիտ գործադրություն ստացել տասնյակ տարիներ, և իրապես վերածվել contra Armenia՝ Հայաստանի դեմ...

Երկրի ծանր վիճակն հարկադրում է կրկնել հուշիկներով ծանր այս բառերը, սակայն սրանց պետք է տալ նոր իմաստ: Մոտ քառասուն տարի տևող մտայնության ու գործելակերպի դարաշրջանը պետք է փակված համարել: Անհրաժեշտ է թողնել արտասահմանի կաֆեներում բազմած հեռավոր հայրենիքի համար քաղաքական դեղատոմսեր ու պարտիզանական դավադրություններ կազմելու սովորությունը, որի հետևանքները կրում է երկրի մեջ գտնվող ժողովուրդը միայն: Սրան

պետք է վերապահել քաղաքական նախաձեռնության իրավունքը։ Պետք է հոգալ ավերակ երկրի առուների ու ճանապարհների, ծխնելույզների ու հանքահորերի, երկրագործական դպրոցների ու տեխնիկական ճեմարանների, կուլտուրական տնտեսությունների ու սպիտակ ածուխի մասին։ Կարճ՝ պետք է մտածել ու տքնել երկրի տնտեսական վերլուծության համար, որ մի ժողովր դի հասարակական ու քաղաքական զորության պատվանշանն է կազմում (ընդգծումները բնագրինն են- Ս.Ա.)։

Այո, կրկին «PRO ARMENIA», նորից «Հայաստանի համար», բայց այս անգամ արդեն նոր իմաստով ու նոր ուղղությամբ։

---

Նույն տեղում։